Ա. ՊՈՒՇԿԻՆ

ՕԼԵԳԻ ԵՐԳԸ

Ելնում է ահա հզոր Օլեգը
Խենթ խազարներից վըրեժ առնելու,
Նըրանց համարձակ հարձակման համար
Գյուղերը սըրի-հըրի մատնելու։
5 Եվ իր համհարզով, հագած կուռ զրահ,
Գընում է նա սեգ նըժույգի վըրա։

Մըթին անտառից նրա հանդիման
Գալիս է ահա վըհուկ ծերունին,
Մութ գալիքների մեկնիչն ու հըման,
10 Կյանքում հընազանդ միայն Պերունին,
Աղոթք ու հմայքով ողջ դար անցկացրած։
Եվ Օլեգ ծերին ընդառաջ գընաց։

— Ասա՛ ինձ, գուշա՛կ, ծերդ անմահների,
Կյանքիս մեջ ինձ հետ ի՞նչ է լինելու,
15 Եվ, ի խընդություն չար ոսոխների,
Շուտո՞վ եմ արդյոք շիրիմ իջնելու։
Բաց մեկնիր բոլորն, ինձնից չըքաշվես,
Վարձըդ՝ քու սիրած ձին կըտամ ես քեզ։

— Չեն վախում գետերն երկրի մեծերից,
20 Եվ պետք չի նըրանց պարգևն իշխանի,

Նրրանց իմաստուն լեզուն՝ վերևից
Ազդված՝ խոսում է կամքը երկընքի.—
Անհայտ են գալոց տարիքն ու մրթին,
Բայց կարդում եմ գիրդ ես քու ճակատին։

Դե՛ միտքդ պահիր իմ խոսքն այսօրից։
Փառքն է կյանքի մեջ խընդում հերոսին.
Հաղթության փառքով հրուչակված ես դու,
Վահանդ՝ Բյուզանդիո բարձր դարբասին։
Հընազանդ են քեզ և՛ ցամաք, և՛ ծով,
Նայում է ոսոխդ բախտիդ նախանձով։

Ե՛վ կապույտ ծովի հեղհեղուկ ալիք,
Ահեղ փոթորկի ժամին կատաղի,
Ե՛վ նետ, և՛ պարսետ, և՛ նենգող դաշույն,
Խընայում են միշտ կյանքը հաղթողի։
Վերք չես առնիլ դու քո կուռ զբրահում,
Հրզորին անտես ոգի է պահում։

Ոչ մի վրտանգից չի վախում քու ձին,
Տիրոջ կամքը միշտ հասկանում է դա.
Մերթ կանգնում է հեզ՝ նետերի տակին,
Մերթ թրռչում ռազմի դաշտերի վրրա.
Ե՛վ ցուրտ, և՛ կրռիվ ոչինչ են դրրան,
Բայց... դա կրլինի պատճառ քու մահվան։

Օլեգը խնդաց. և սակայն մրթնեց,
Մրռայլեց հանկարծ չարագույժ մրտքից.
Լուռ ու մրտախոհ՝ թամբիցը բրռնեց,
Ներքև է իջնում սիրած նրժույգից,
Ու վերջին անգամ իր հին ընկերին
Փայփայում, շոյում, փարում է վրզին։

— Դե՛հ, մընաս բարյավ, վաղեմի ընկեր.
Ժամանակն եկավ մեր բաժանվելու.
Հանգիստ կաց հիմա, էլ ոտքս բընավ
Քու ասպանդակի մեջ չեմ դընելու։
Դե՛հ, գընա՛, բայց միշտ հիշիր Օլեգին։
Է՛յ, մանկլավիկնե՛ր, հեռու տարեք ձին։

— Ծածկեցե՛ք սըրան թավարծի գորգով,
Սանձիցը բըռնած մարգերքս տարե՛ք,
Լողացրե՛ք, պահեք ընտրած հատիկով,
Աղբյուրի վըճիտ ջըրով ջըրեցեք։
Եվ մանկլավիկներն իսկույն ձին տարան,
Մի ուրիշ նոր ձի մոտ բերին նըրան։

Ցընծում է խմբով անմահ Օլեգը
Ջըվարթ ձայներով լիք բաժակների.
Ճերմակ է նըրանց գըլխի ալիքը,
Ինչպես վաղորդյան ձյունը լեռների...
Հիշում են նըրանք օրերն անցկացրած,
Եվ կըռիվները միասին վարած։

— Բայց իմ ընկե՛րը, գոչեց Օլեգը.
Ո՞ւր է, ինձ ասեք, սիգապանծ իմ ձին.
Առո՞ղջ է արդյոք, այնպես սրընթաց,
Այնպես կըրակոտ, աշխույժ տակավին...
Եվ լըսում է, որ սեպ բըլրի վըրա
Մահու սև քընով վաղ է քնել նա։

Խոնարհեց գըլուխն Օլեգը հըզոր,
Եվ միտք է անում.— Ինչ եղավ հըման.
Սըտախոս կախա՛րդ, անխե՛լք ալևոր,
Թե չէի լսել ես քու սըտության,

Կարեի մինչ օրս իմ ձին ես հեծնել։
Եվ ձիու ոսկերքն ուզում է տեսնել։

Գընում է Օլեգն ահա պալատից,
80 Նըրա հետ Իգորն և հյուրերը հին.
Տեսնում են ձիու ոսկերքը թափված
Բըլուրի վըրա, Դընեպրի ափին։
Փոշին ծածկում է, անձրևն ողողում,
Ու սեզը վըրեն քամին օրորում։

85 Ոտն զգույշ դըրավ իշխանը գանգին
Ու կանչեց.— քընի՛ր, միայնակ ընկեր,
Քեզնից շատ ապրեց քու տերն ալևոր.
Թարմ շիրմիս վըրա դու չես մահաբեր
Տապարի տակին սեզը ներկելու,
90 Քու տաք արյունով աճյունս հարգելու...

— Ահա՛ թե ուր էր օրհասըս պահված.
Այս չոր ոսկո՛րն էր ինձ մահ սպառնում։
Այնինչ՝ անկենդան գանգիցը հանկարծ
Ֆըշշալով սողաց մի օձ չարաթույն,
95 Սև թոկի նըման փաթաթվեց ոտքին,
Իշխանն օձահար գոռաց ցավագին։

Փըրփրուն թասերը շըրջան են առնում
Օլեգի մահվան տըխուր հարկինքին,
Իգորն ու Օլգան բըլուրի վըրա,
100 Նըստած է խումբը Դընեպրի ափին —
Հիշում են քաջերն օրերն անցկացրած
Եվ կռիվները միասին վարած։